

### ՀԱՅԿ ԿԵՍՈՅԱՆ

ՀՀ Նախագահի աշխատակազմի իրավաբանական վարչության առաջատար մասնագետ,  
ՀՀ պետական կառավարման ակադեմիայի իրավագիտության ամբիոնի ասպիրանտ



## ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԳՈՐԾԱՌՈՒԹՅՈՒՆ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՈՒՄԱՆ ՍԿՁԲՈՒՆՔԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Հոդվածի շրջանակներում ուսումնասիրության առարկա է հանդիսացել Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի գործառնության ղեկավարությունը իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի ապահովման գործում: Կատարված ուսումնասիրության արդյունքում վեր են հանվել և ներկայացվել են սահմանադրական դատարանի այն լիազորությունները, որոնք անմիջականորեն առնչվում են իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի ապահովման հետ: Միաժամանակ, անդրադարձ է կատարվել նաև սահմանադրական դատարանի նշված գործառնության իրականացման համար բավարար իրավական և քաղաքական երաշխիքներով ապահովվածության խնդիրներին:

*Հիմնաբառեր- իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը, սահմանադրական լիազորությունների հետ կապված վեճ, Սահմանադրության մեկնարանում, ինստիտուցիոնալ անկախություն, գործառնության անկախություն:*

Իրավական և ժողովրդավարական պետությունում սահմանադրական արդարադատության իրականացումը առանցքային կարևորություն է ձեռք բերել պետությունում ժողովրդավարության ամրապնդման, մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների երաշխավորման, ինչպես նաև՝ իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի (այսուհետ՝ ԻԲՀՄ) ապահովման տեսանկյունից: ՀՀ-ում սահմանադրական արդարադատության իրականացման գործառնությունը վերապահված է սահմանադրական դատարանին (այսուհետ՝ ՄԴ), որը դատական սահմանադրական վերահսկողության միջոցով պետք է երաշխավորի Սահմանադրության գերակայությունը և կայունությունը:

Ժամանակակից ԻԲՀՄ-ը և սահմանադրական արդարադատությունը անմիջականորեն փոխկապակցված են: ԻԲՀՄ-ի ապահովման գործում սահմանադրական արդարադատության դերը քննարկման առարկա է հանդիսացել տեսական գրականությունում: Ս. Մերեգինան և Ա. Սվեթը սահմանադրական արդարադատության ղեկավարությունը կարևորում են հատկապես խորհրդարանին և խորհրդարանական մեծամասնությանը հավասարակշռելու տեսանկյունից: Ս. Մերեգինան նշում է, որ, եթե խորհրդարանի ղեկավարության ընդլայնմամբ պետության ղեկավարի ղեկավարությունը սահմանափակվեց, ապա սահմանադրա-

կան արդարադատության մարմինների ձևավորումը երաշխիք հանդիսացավ «խորհրդարանի բռնակայությունից» խուսափելու համար: Իսկ Ա. Սվեթը նշում է, որ, «ՄԴ-ի ակտեր համարվում են «հակակշիռ» խորհրդարանական մեծամասնությանը այն դեպքում, երբ խորհրդարանական մեծամասնությունը բավականին հզոր է, կամ համարվում են օրենսդրին «փոխարինոր» այն դեպքում, երբ խորհրդարանում մեծամասնություն գոյություն չունի: ՄԴ-ը, այդ կերպ երբեմն «արգելում», «կանխում» է խորհրդարանի որոշումներ, որի արդյունքում ուղենշում է պետությունում օրենսդրության զարգացման ուղղությունները»<sup>2</sup>:

ԻԲՀՄ-ի և սահմանադրական արդարադատության միջև կապը քննարկվել է նաև մի շարք այլ հեղինակների կողմից: Վ. Չորկինը նշում է, որ, «ԻԲՀՄ-ի կենսագործումը ոչ միայն իրավական, այլ նաև քաղաքական բարդ հիմնախնդիր է, որը կախված է պետական իշխանության մարմիններին վերապահված լիազորությունները՝ ԻԲՀՄ-ի հիման վրա իրականացնելու, պետական իշխանության ճյուղերի միջև հակամարտությունների և վեճերի առաջացումը չթույլատրելու, իսկ դրանց առաջացման դեպքում՝ սահմանադրական արդարադատության միջոցով լուծելու հնարավորությամբ»<sup>3</sup>: Լ. Մամուտը ԻԲՀՄ-ի ապահովման գործում սահմանադրական արդարադատության դերակատարությունը կարևորում է այն առումով, որ

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ**

ԻԲՀՍ-ը վերացական է, որի արդյունքում պետական իշխանության ճյուղերի միջև հնարավոր է առաջանան վեճեր, որոնց լուծման գործում առանցքային դերակատարություն ունեն բարձրագույն սահմանադրական ատյանները, որոնք մեկնաբանում են սահմանադրական դրույթները :

Վերլուծելով ԻԲՀՍ-ի և սահմանադրական արդարադատության միջև կապը՝ կարող ենք առանձնացնել հետևյալ հիմնական դրույթները՝

առաջին՝ ժամանակակից ԻԲՀՍ-ի երաշխավորման գործում առանցքային դեր ունի դատական սահմանադրական վերահսկողության իրականացում,

երկրորդ՝ իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը լայն առումով վերացական է, բացի այդ ժամանակի ընթացքում զարգանում և ձեռք է բերում նոր բնութագրիչներ և ընկալումներ, որի արդյունքում առաջանում է իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքին վերաբերող սահմանադրական դրույթների մեկնաբանման անհրաժեշտություն, որը իրականացնելու բացառիկ լիազորությունը վերապահված է ՄԳ-ին,

երրորդ՝ պետական իշխանության մարմինների միջև իրենց սահմանադրական լիազորությունների իրականացման ընթացքում առաջանում են իրավական և քաղաքական բնույթ ունեցող վեճեր, որտեղ սահմանադրական բնույթ ունեցող իրավական վեճերի լուծման լիազորությունը վերապահված է ՄԳ-ին:

*ԻԲՀՍ-ի ապահովման տեսանկյունից կարևոր նշանակություն ունի Սահմանադրության մեկնաբանման լիազորությունը*. ՀՀ Սահմանադրությունը անմիջականորեն չի ամրագրել ՄԳ-ի Սահմանադրության մեկնաբանման լիազորությունը: Այս առումով հարկ է նշել, որ ՄԳ-ն 2006թ. ՄԳ-Ռ-652 որոշման մեջ անդրադառնում է Սահմանադրության մեկնաբանման խնդրին և նշում է, որ ՄԳ-ի իրավական դիրքորոշումների բովանդակությունը Սահմանադրության նորմերի պաշտոնական մեկնաբանություն են: Հետևաբար՝ ՄԳ-ն Սահմանադրության մեկնաբանման գործառույթը իրականացնում է ՄԳ-ի այլ լիազորությունների միջոցով:

Սահմանադրության մեկնաբանման գործառույթը ՄԳ-ի բացառիկ լիազորությունն է, որը կոչված է բացահայտելու սահմանադրական նորմերի իրավաբանական բովանդակությունը և ապահովել դրանց իրավակիրառ պրակտիկայում միատեսակ ընկալումները և կիրառումը: Սահմանադրության մեկնաբանման և ԻԲՀՍ-ի միջև կապը պայմանավորված է հետևյալ հանգամանքներով՝ *առաջին*՝ ԻԲՀՍ-ը ժամանակի ընթացքում զարգանում և վերափոխվում է, որի արդյունքում ձեռք է բերում նոր

բնութագրիչներ և ընկալումներ, որոնք լրացուցիչ մեկնաբանման և բացահայտման անհրաժեշտություն ունեն, *երկրորդ*՝ Սահմանադրությունում առկա օրենսդրական բացերը և անորոշությունները խոչընդոտում են ԻԲՀՍ-ի ապահովմանը, որոնք կարող են հաղթահարվել Սահմանադրության մեկնաբանման միջոցով:

ՄԳ-ի կողմից Սահմանադրության մեկնաբանման հետ կապված հարցերը քննարկվել են նաև տեսական գրականությունում: Է. Կուրիսը նշում է, որ. «Սահմանադրությունը մեկնաբանող դատարանը իրականացնում է սահմանադիր իշխանությունը, ինչի արդյունքում որոշ հեղինակներ հանգում են այն եզրակացության, որ ՄԳ-ի որոշումներն ու դրանցում ընդգրկված պաշտոնական սահմանադրական դոկտրինան է այն նյութը, որը ձևավորում է սահմանադրական իրավունքը, ուստի սահմանադրական իրավունքը գոյություն ունի այնքանով, որքանով Սահմանադրության դրույթներն են մեկնաբանվել ՄԳ-ի կողմից»: Գ. Հարությունյանը նշում է, որ. «... եվրոպական սահմանադրական զարգացումների նոր տրամաբանությունը փոխեց պատկերացումները դատավորի դերի մասին: Դատավորը դադարեց ընկալվել միայն որպես օրենքը կիրառող, նա հանդես եկավ նաև օրենքը «դատող», օրենքը մեկնաբանող, օրենքի նկատմամբ վերահսկողություն իրականացնող: Պետությունում արդարադատությունն է գնահատում իշխանության մյուս ճյուղերի գործառույթների իրականացման իրավաչափությունը՝ դրանց սահմանադրականության բացահայտման ճանապարհով: ՄԳ-ը այդ գործառույթը իրականացնում է մյուս դատարանների աջակցությամբ»<sup>7</sup>:

Մի շարք հեղինակներ՝ Վ. Գրիգորիևը, Գ. Գաղժիևը, Վ. Չորկինը, Լ. Ֆրիդմենը, Վ.Սինգլիչիսը Սահմանադրության մեկնաբանումը դիտարկում են Սահմանադրության նորմերի զարգացման տեսության տեսանկյունից: Այսպես՝ Վ. Չորկինը նշում է, որ ՄԳ-ն Սահմանադրությունը մեկնաբանում է Սահմանադրության նորմերը ժամանակի ոգուն համապատասխան, որի արդյունքում հանդես է գալիս որպես Սահմանադրության պահպանող: Վ. Գրիգորիևը՝ ՄԳ-ի կողմից Սահմանադրության նորմերի մեկնաբանման կարևորությունը պայմանավորում է հետևյալ գործոններով՝ Սահմանադրությունում փոփոխություն կամ լրացում կատարելը բարդ գործընթաց է, որից խուսափելու համար անհրաժեշտ է Սահմանադրության նորմերը մեկնաբանման միջոցով զարգացնել, բացի այդ, երբեմն Սահմանադրության դրույթներում առաջանում են հակասություններ, որոնք նույնպես պետք է հաղթահարվեն մեկնաբանման միջոցով: Լ. Ֆրիդմենը նշում է, որ, «ԱՄՆ-ի գերագույն դա-

www.journal.lawinstitute.am

տարանը պարզապես չի մեկնաբանում Սահմանադրության տեքստը, այսինքն՝ միայն հետազոտում է, թե ինչ են Սահմանադրության դրույթներում նկատի ունեցել գրողները, այլ անում է ավելին, դատարանը մշակում և ընդլայնում է սահմանադրական դոկտրինան»<sup>10</sup> : Այս խնդրին անդրադարձել է նաև Վ.Սինգեվիչիսը, ով նշում է, որ. «Սահմանադրությունը տեքստ է, որի դրույթները երբեմն ունեն տարբեր ընկալումներ: Սակայն Սահմանադրության մեկնաբանումը չպետք է սահմանափակվի միայն Սահմանադրության տառացի մեկնաբանմամբ, այլ Սահմանադրությունը պետք է մեկնաբանվի տարբեր տեսանկյուններից՝ տառացի, համակարգային, տրամաբանական, պատմական, համեմատական իրավունքի հիմնական սկզբունքների հիման վրա»<sup>11</sup> :

Սահմանադրության մեկնաբանման միջոցով հաղթահարվում են օրենսդրական բացերը և անորոշությունները, որոնք իրավակիրառական պրակտիկայում հանգեցնում է տվյալ նորմի այնպիսի մեկնաբանությանն ու կիրառմանը, որը հանգեցնում է Սահմանադրության խախտման: Սահմանադրական դրույթներում առկա օրենսդրական բացերի և անորոշությունների հաղթահարման գործում առանցքային կարևորություն ունի ՄԳ-ը: Այս առումով Գ. Հարությունյանը՝ «Օրենսդրական բացերի հիմնախնդիր Հայաստանի Հանրապետության սահմանադրական արդարադատության պրակտիկայում» գեկույցում նշում է, որ իրավական բացը իր բնույթով սահմանադրաիրավական դաշտի ստվերոտ դրսևորում է, որը կարող է հաղթահարվել ՄԳ-ի կողմից Սահմանադրության լույսի ներքո<sup>12</sup> : Իրավական դաշտում առկա օրենսդրական բացերի և անորոշությունների հաղթահարման վերաբերյալ ՄԳ-ի իրավական դիրքորոշումները մի կողմից լրացնում են օրենսդիր իշխանությանը, իսկ մյուս կողմից օգնում են օրենսդիր և այլ իրավաստեղծ մարմիններին ճիշտ առաջնորդվելու սահմանադրական հիմնարար սկզբունքներով և լուծումներով՝ իրենց իրավակարգավորիչ գործունեության ընթացքում<sup>13</sup> : Այսպիսով՝ սահմանադրական նորմերի մեկնաբանումը ՄԳ-ի բացառիկ գործունեության տեսակ է, որն

առաջին իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի զարգացման համատեքստում ժամանակակից ընկալումներին համապատասխան միտված է բացահայտելու Սահմանադրության նորմի բովանդակությունը, այդ թվում՝ ԻԲՀՄ-ին վերաբերող,

երկրորդ՝ Սահմանադրության մեկնաբանման միջոցով հաղթահարվում են ԻԲՀՄ-ի կիրառմանը խոչընդոտող՝ Սահմանադրությունում առկա օրենսդրական բացերը և անորոշությունները,

որոնք իրավակիրառական պրակտիկայում հանգեցնում են տվյալ նորմի այնպիսի մեկնաբանությանն ու կիրառմանը, որը հանգեցնում է Սահմանադրության խախտման:

*ԻԲՀՄ-ի ապահովման տեսանկյունից կարևոր է համարվում ՄԳ-ի՝ սահմանադրական մարմինների միջև սահմանադրական լիազորությունների իրականացման առնչությամբ առաջացած վեճերի լուծման լիազորությունը*: 2015թ. խմբ. Սահմանադրությամբ ՄԳ-ին լիազորություն վերապահվեց լուծել սահմանադրական մարմինների միջև սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացած վեճերը: 2015թ. խմբ. Սահմանադրության 168-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ՄԳ-ին լիազորություն է վերապահվել լուծելու սահմանադրական մարմինների միջև սահմանադրական մարմինների միջև սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացող վեճերը: Նշված սահմանադրական ձևակերպումից բխում է հետևյալը՝

առաջին՝ սահմանադրական մարմինների միջև սահմանադրական լիազորությունների իրականացման հետ կապված վեճերի լուծումը ՄԳ-ի բացառիկ լիազորությունն է, քանի որ պետական իշխանության որևէ այլ մարմին այդպիսի սահմանադրական լիազորություն չունի,

երկրորդ՝ վեճի կողմ կարող են հանդես գալ սահմանադրական կարգավիճակ ունեցող Սահմանադրությամբ նախատեսված պետական իշխանության մարմինները, իսկ սահմանադրական կարգավիճակ չունեցող պետական իշխանության մարմինները սահմանադրական լիազորությունների հետ կապված վեճի կողմ չեն կարող հանդիսանալ, երրորդ՝ վեճի օբյեկտ են հանդիսանում սահմանադրական մարմինների կողմից սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացող վեճերի հետ կապված հարաբերությունները:

ՄԳ-ի՝ սահմանադրական մարմինների միջև սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացող վեճերի լուծման լիազորության հետ կապված միջազգային փորձի ուսումնասիրությունից բխում է, որ պետությունների սահմանադրությունները միասնական մոտեցումներ չեն ամրագրել<sup>14</sup> : ՀՀ-ում սահմանադրական մարմինների միջև սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացող վեճերը լուծվում են ՀՀ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով սահմանված կարգով: «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի նախագծի 74-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ՄԳ-ն սահմանադրական լիազորությունների վերաբերյալ վեճերը քննում է Սահմանադրությամբ սահմանված՝ մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների ապահովման

և պաշտպանության անհրաժեշտության, օրինականության ասպահովման, *օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարանջատման* և տեղական ինքնակառավարման երաշխավորման սկզբունքների տեսանկյունից:

Սահմանադրական մարմինների միջև առաջացած վեճերի արդյունավետ լուծման տեսանկյունից կարևոր նշանակություն ունի նշված հարցով ՄԳ դիմող սուբյեկտների շրջանակի հարցը: Այս առումով միջազգային փորձի ուսումնասիրությունից բխում է, որ նշված հարցով ՄԳ դիմող սուբյեկտների շրջանակը տարբեր է<sup>15</sup>: ՀՀ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի նախագծի 74-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սահմանադրական մարմինների միջև սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացած վեճերի վերաբերյալ գործերով ՄԳ դիմելու լիազորություն ունեն՝ *պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդը, Հանրապետության Նախագահը, կառավարությունը, Բարձրագույն դատական խորհուրդը և ՏԻՄ-երը*: Սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացած վեճերի վերաբերյալ ՄԳ դիմող սուբյեկտների շրջանակի հետ կապված կարծում ենք ելակետային պետք է համարել այն դիտարկումը, որ սահմանադրական լիազորությունների հետ կապված վեճի կողմ հանդիսացող սահմանադրական բոլոր մարմինները պետք է սահմանադրական լիազորություն ունենան դիմել ՄԳ: Այս առումով ՀՀ Սահմանադրության նորմերի վերլուծությունից բխում է, որ սահմանադրական կարգավիճակ ունեցող որոշ մարմիններին (Գատախազությունը, դատարաններ, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, Հաշվեքննիչ պալատը, Կենտրոնական բանկը, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը, Զննչական մարմինները) սահմանադրական լիազորություն չի վերապահվել լիազորությունների հետ կապված վեճերի առաջացման դեպքում դիմել ՄԳ:

*ԻԲՀՄ-ի ասպահովման տեսանկյունից առանցքային է ՄԳ-ի կողմից սահմանադրական պատասխանատվության միջոցների կիրառումը*<sup>16</sup>: Սահմանադրական պատասխանատվություն կիրառելու գործառնությունը վերապահված է սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմիններին: Սակայն, ՄԳ-ները որպես առանձին լիազորություն չունեն սահմանադրական պատասխանատվության միջոցների կիրառման, սակայն այլ լիազորությունների միջոցով իրականացնում են այդպիսի գործառնություն: ՄԳ-ի կողմից սահմանադրական պատասխանատվության հիմնականում իրականացվում է հետևյալ լիազորությունների միջոցով՝ եզրակացություն է տալիս Հանրապետու-

թյան նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի առկայության մասին, որոշում է կայացնում պատգամավորի լիազորությունները դադարեցման վերաբերյալ, լուծում է ՄԳ-ի դատավորի լիազորությունները դադարեցնելու հարցը, որոշում է կայացնում կուսակցության գործունեությունը կասեցնելու կամ արգելելու վերաբերյալ և այլն:

Վերը նշվածից բխում է, որ իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի ասպահովման գործում ՄԳ-ն պետական իշխանության մարմինների համակարգում իրեն վերապահված տեղով և իր կողմից իրականացվող գործառնություններով պայմանավորված՝ կարևոր դերակատարություն ունի: Այս համատեքստում առաջնային հարցերից մեկը դառնում է այն, որ ՄԳ-ի արդյունավետ գործունեության համար ստեղծվեն իրավական և քաղաքական բավարար երաշխիքներ: ՄԳ-ի գործունեության համար նշված երաշխիքների ասպահովումը իրենից ենթադրում է՝

*առաջին*՝ պետական իշխանության մարմինների համակարգում ՄԳ-ը պետք է ունենա այնպիսի ինստիտուցիոնալ կարգավիճակ, որը չի խոչընդոտի ՄԳ-ի գործառնությունների իրականացմանը,

*երկրորդ*՝ ՄԳ-ը պետք է ունենա գործառնության անկախության բավարար երաշխիքներ, ինչպես նաև պետք է առկա լինի սահմանադրական վերահսկողության օբյեկտների և սուբյեկտների ամբողջական և հիմնավորված ընտրություն:

2015թ. խմբ. Սահմանադրության 163-րդ հոդվածի 1-ին մասի վերլուծությունից բխում է, որ ՄԳ-ն համարվում է դատական իշխանության համակարգի մաս: Այս պարագայում հարց է առաջանում, թե ՄԳ-ը՝ գտնվելով դատական իշխանության համակարգում կարող է արդյո՞ք արդյունավետ կերպով իրականացնել ԻԲՀՄ-ի ասպահովման գործում իրեն վերապահված լիազորությունները, հատկապես՝ լուծելու սահմանադրական մարմինների միջև սահմանադրական լիազորությունների իրականացման առանցքային առաջացած վեճերը: Այս հարցի հետ կապված 2015թ. սահմանադրական փոփոխությունների վերաբերյալ տրված նախնական կարծիքում Վենետիկի հանձնաժողովը նշում է, որ. «Հաշվի առնելով սահմանադրական մարմինների միջև նրանց սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացող վեճերի լուծման ՄԳ-ի լիազորությունը՝ անհրաժեշտ է ՄԳ-ը առանձնացնել այլ դատարաններից, քանի որ այն չի կարող լինել վեճի կողմ, որպես դատական իշխանության բաղկացուցիչ մաս, հետևաբար, անհրաժեշտ է նախատեսել ՄԳ-ին նվիրված առանձին բաժին կամ գլուխ, որը կհստակեցնի ՄԳ-ի հատուկ բնույթը»<sup>17</sup>:

Պետական իշխանության մարմինների համա-

կարգում ՄԳ-ի ինստիտուցիոնալ տեղի հետ կապված գտնում ենք, որ ՄԳ-ն՝ համարվելով սահմանադրական արդարադատություն իրականացնող դատական ատյան՝ տրամաբանական և հիմնավորված է, որ գտնվի դատական իշխանության համակարգում: Սակայն, գտնվելով դատական իշխանության համակարգում՝ պետք է ունենա գործառու-թային անկախություն և գործունեության բավարար երաշխիքներ՝ իրեն վերապահված լիազորությունների իրականացման համար: Հետևաբար՝ անկախ այն հանգամանքից թե ՄԳ-ն կգտնվի դատական իշխանության համակարգում կամ կունենա այլ կարգավիճակ դատական իշխանության համակարգից դուրս, երկու դեպքում էլ առանցքային է համարվում ՄԳ-ի գործառութային անկախության ապահովման խնդիրը:

ԻԲՀՍ-ի ապահովման գործում ՄԳ-ին վերապահված գործառութային արդյունավետ իրականացման համար ՄԳ-ն պետք է ունենա գործառութային անկախությունը: 2015թ. խմբ. Սահմանադրության 167-րդ հոդվածի 2-րդ սասի համաձայն՝ ՄԳ-ն արդարադատություն իրականացնելիս անկախ է և ենթարկվում է միայն Սահմանադրությանը: Սակայն, սահմանադրական մակարդակով ՄԳ-ի անկախության ամրագրումը դեռևս բավարար չէ ՄԳ-ի գործառութային անխախտության երաշխավորման համար: ՄԳ-ի գործառութային անկախությունը իրենից ենթադրում է, որ պետական իշխանության մարմինները և պաշտոնատար անձիք չպետք է որևէ կերպ ազդեցություն ունենան ՄԳ-ի գործունեության վրա: Հատկապես կարևոր է քաղաքական ազդեցություններից ՄԳ-ի գործառութային անկախության ապահովումը, ինչը բավականին բարդ է, քանի որ ՄԳ-ի գործունեությունում իրավունքը և քաղաքականությունը որոշ չափով «խաչաձևվում» են, որը դրսևորվում է հետևյալ կերպ՝

*առաջին*՝ ՄԳ-ն կազմավորվում է քաղաքական ինստիտուտների կողմից,

*երկրորդ*՝ ՄԳ-ն իր գործառութային շրջանակներում լուծում է նաև քաղաքական գործունեության ներազդեցության արդյունքում առաջացած իրավական վեճեր, որոնք ուղղակիորեն և անուղղակիորեն քաղաքական տարրեր են պարունակում,

*երրորդ*՝ ՄԳ-ի ընդունած որոշումները ունեն ինչպես իրավական, այնպես էլ քաղաքական հետևանքներ՝ կուսակցության գործունեության դադարեցում, նոր ընտրությունների նշանակում:

Այսպիսով՝ ԻԲՀՍ-ի ապահովման տեսանկյունից առանցքային դեր ունեն սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմինները: ԻԲՀՍ-ի ապահովման տեսանկյունից ՄԳ-ի դերակատարությունը պայմանավորված է հետևյալով՝

ա) ԻԲՀՍ-ը ժամանակի ընթացքում զարգանում և ձեռք է բերում նոր ընկալումներ, որի արդյունքում անհրաժեշտություն է առաջանում մեկնաբանել իշխանությունների բաժանման և հավասարկշռման սկզբունքին վերաբերող սահմանադրական դրույթները, որի իրականացման բացառիկ լիազորությունը վերապահված է ՄԳ-ին,

բ) պետական իշխանության մարմինների հարաբերությունները կարգավորող օրենսդրական դաշտում ժամանակի ընթացքում ի հայտ են գալիս օրենսդրական բացերը և անորոշություններ, որոնց առկայությունը հանգեցնում է պետական իշխանության մարմինների գործառութային, լիազորությունների և պատասխանատվության շրջանակի ոչ հստակ տարանջատման: Սահմանադրական մակարդակում առկա օրենսդրական բացերը և անորոշություններ, որոնք իրավակիրառական պրակտիկայում հանգեցնում է տվյալ նորմի այնպիսի մեկնաբանությանն ու կիրառմանը, որը հանգեցնում է Սահմանադրության խախտման, հաղթահարվում են ՄԳ-ի կողմից՝ Սահմանադրության մեկնաբանման միջոցով, որը ՄԳ-ի բացառիկ լիազորությունն է,

գ) պետական իշխանության մարմինների միջև իրենց սահմանադրական լիազորությունների իրականացման ընթացքում առաջանում են վեճեր, որտեղ իրավական (սահմանադրական) բնույթ ունեցող վեճերի լուծման լիազորությունը վերապահված է ՄԳ-ին: ՄԳ-ին վերապահված նշված լիազորությունների արդյունավետ իրականացման համար ՄԳ-ը պետք է ունենա՝

առաջին՝ պետական իշխանության մարմինների համակարգում այնպիսի ինստիտուցիոնալ կարգավիճակ, որը չի խոչընդոտի ՄԳ-ի լիազորությունների իրականացմանը,

երկրորդ՝ ՄԳ-ն պետք է ունենա գործառութային անկախության բավարար երաշխիքներ, որի պարագայում հանրային իշխանության մարմինները և պաշտոնատար անձիք չեն միջամտի ՄԳ-ի գործառութային իրականացմանը,

երրորդ՝ պետք է առկա լինեն սահմանադրական վերահսկողության օբյեկտների և դիմող սուբյեկտների հիմնավորված և ամբողջական շրջանակ:



<sup>1</sup> Տե՛ս, Серегина С. «Конституционный контроль в аспекте формы правления» международная научно-практическая конференция, ст. 28-30, հասանելի էր՝ [http://www.kspmr.idknet.com/library/bpreview/d913d104-5fa9-9c62.eiiooii\\_.pdf](http://www.kspmr.idknet.com/library/bpreview/d913d104-5fa9-9c62.eiiooii_.pdf)

<sup>2</sup> Տե՛ս, Sweet A., «The politics of constitutional review in France and in Europe», vol 5, N 1, 2007, pp. 85-87 հասանելի էր՝ <https://academic.oup.com/icon/article/5/1/69/722503/The-politics-of-constitutional-review-in-France>.

<sup>3</sup> Տե՛ս, Зорькин В., «Принцип разделения властей в деятельности конституционного суда РФ» Конституционное правосудие, 2008, 2(40)-3(41)08, ст. 46-48.

<sup>4</sup> Տե՛ս, Мамут Л.С., «Публичная власть, государство и разделение властей, конституционный суд как гарант разделения властей», Сборник докладов, Москва, 2004г., ст. 262. հասանելի էր՝ [http://www.rfcr.ru/downloads/159\\_170.pdf](http://www.rfcr.ru/downloads/159_170.pdf).

<sup>5</sup> Ինչը ընդգծել է նաև Վենետիկի հանձնաժողովը՝ Ղազախստանի սահմանադրության նախագծի վերաբերյալ տրված կարծիքում: Ղազախստանի սահմանադրության նախագծով սահմանադրության մեկնաբանման լիազորություն էր վերապահվել խորհրդարանին, որի կապակցությամբ Վենետիկի հանձնաժողովը իր մտահոգությունը հայտնեց և նշեց, որ սահմանադրության մեկնաբանման լիազորությունը պետք է վերապահվի ՄԳ-ին, տե՛ս, *European commission for democracy through law*, «Opinion on the draft amendments to the constitution of Kyrgyzstan» նշված զեկույց point 28-29.

<sup>6</sup> Տե՛ս, Курис Э., «О стабильности Конституции, источниках конституционного права и мнимом всемогуществе конституционных судов», Сравнительное конституционное обозрение, 2004, N 3(48), ст. 94.

<sup>7</sup> Տե՛ս, Հարությունյան Գ. «Երկրի իրավական անվտանգության երաշխավորումը որպես սահմանադրական ժողովրդավարության հաստատման կարևոր գրավական» նշված աշխատության էջ 20:

<sup>8</sup> Տե՛ս, Зорькин В., «Прецентный характер решений Конституционного Суда Российской Федерации», Журнал российского права. 2004. N 12. ст. 3-9.

<sup>9</sup> Տե՛ս, Григорьев В., «Текстуально-правовые конфликты в конституциях и проблемы их преодоления (на примере приднестровской Молдавской Республики и Российской Федерации)», ст. 147, հասանելի էր՝ [http://www.kspmr.idknet.com/LIBRARY/bpreview/d913d104-5fa9-9c62.EIIOOII\\_.pdf](http://www.kspmr.idknet.com/LIBRARY/bpreview/d913d104-5fa9-9c62.EIIOOII_.pdf)

<sup>10</sup> Տե՛ս, Фридман Л. «Введение в американское право», Москва, Прогресс, 1993, ст. 286.

<sup>11</sup> Տե՛ս, Sinkevicius V. «The notion of constitution in the rulings of the constitutional court of the Republic of Lithuania», Конституционное Правосудие, 1(59)2013, Ереван 2013, ст. 13, հասանելի էր՝

[http://concourt.am/armenian/con\\_right/1.59-2013/vestnik59.pdf](http://concourt.am/armenian/con_right/1.59-2013/vestnik59.pdf)

<sup>12</sup> Տե՛ս, Հարությունյան Գ. Գ. «Օրենսդրական բացերի հիմնախնդիր Հայաստանի Հանրապետության սահմանադրական արդարադատության պրակտիկայում», Զեկույց սահմանադրական դատարանների եվրոպական կոնֆերանսի 16-րդ կոնֆերանսում, Վիլնյուս 2008թ., հասանելի էր՝ <http://concourt.am/armenian/structure/president/harutunyan-articles.htm>

<sup>13</sup> Տե՛ս, Հարությունյան Գ. Գ. «Սահմանադրական նորմերի մեկնաբանման հայեցակարգային մոտեցումները Հայաստանի Հանրապետության սահմանադրական արդարադատության պրակտիկայում» զեկույց՝ սահմանադրական արդարադատության հիմնախնդիրներին նվիրված կոնֆերանսում, Ալժիր, հոկտեմբեր 2008թ., հասանելի էր՝ [http://www.concourt.am/armenian/structure/president/articles/algiers2008\\_am.pdf](http://www.concourt.am/armenian/structure/president/articles/algiers2008_am.pdf)

<sup>14</sup> Տե՛ս, Բոլիվիայի սահմանադրության 202-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ՄԳ-ը լուծում է հանրային իշխանության մարմինների միջև առաջացած վեճերը: Լեհաստանի սահմանադրության 189-րդ հոդվածի համաձայն՝ սահմանադրական տրիբունալը լուծում է կենտրոնական պետական իշխանության մարմինների միջև առաջացած վեճերը: Խորվաթիայի սահմանադրության 129-րդ հոդվածի և Ալբանիայի սահմանադրության 131-րդ հոդվածի համաձայն՝ ՄԳ-ը լուծում է օրենսդիր, գործադիր և դատական իշխանության ճյուղերի միջև առաջացած վեճերը: Մակեդոնիայի սահմանադրության 110-րդ հոդվածի համաձայն՝ ՄԳ-ն որոշում է օրենսդիր, գործադիր և դատական իշխանություն իրականացնող մարմինների իրավագործությունների հետ կապված վեճերը: Ադրբեջանի սահմանադրության 130-րդ հոդվածի 8-րդ կետի համաձայն՝ ՄԳ-ն որոշում է վեճերը, որոնք կապված են օրենսդիր և գործադիր իշխանության ճյուղերի բաժանման հետ: Վրաստանի սահմանադրության 89-րդ հոդվածի համաձայն՝ ՄԳ-ն լուծում է պետական մարմինների միջև լիազորությունների հետ կապված վեճերը: Սերբիայի սահմանադրության 167-րդ հոդվածի համաձայն՝ ՄԳ-ն լուծում է լիազորությունների հետ կապված վեճերը դատարանների և պետական իշխանության այլ մարմինների միջև, լիազորությունների հետ կապված վեճերը պետական իշխանության տարածքային իշխանությունների և տեղական ինքնակառավարման մարմինների միջև, լիազորությունների հետ կապված վեճերը տարածքային մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների միջև:

<sup>15</sup> Տե՛ս, Լեհաստանի սահմանադրության 192-րդ հոդվածով սահմանադրական լիազորությունների հետ կապված վեճերով ՄԳ դիմելու լիազորություն ունեն՝ Հանրապետության նախագահը, խորհրդարանի երկու պալատները, վարչապետը, գերագույն դատարանի նախագահը, վերահսկիչ պալատի նախագահը: Ռումինիայի սահմանադրության 146-րդ հոդվածի համաձայն՝ սահմանադրական լիազորությունների հետ կապված վեճերով ՄԳ կարող են դիմել՝ Հանրապետության նախագահը, խորհրդարանի երկու պալատների նախագահներից մեկը, վարչապետը, մագիստրատուրայի գերագույն խորհրդի նախագահը: Մլովենիայի «Սահմանադրական դատարանի մասին» օրենքի 61-րդ հոդվածի համաձայն՝ դատարանների և պետական մարմինների, ինչպես նաև

ԱԺ-ի, Հանրապետության նախագահի և կառավարության միջև լիազորությունների վերաբերյալ առաջացած վեճերի դեպքում, ՄԳ կարող է դիմել այն պետական մարմինը, որը գտնում է, որ առաջացել է լիազորությունների վերաբերյալ վեճ: Բուլղարիայի սահմանադրության 150-րդ հոդվածի համաձայն՝ դիմող սուբյեկտներ են համարվում խորհրդարանի պատգամավորների մեկ հինգերորդը, Հանրապետության նախագահը, նախարարների խորհուրդը, վճռաբեկ դատարանը: Խորվաթիայի «Սահմանադրական դատարանի մասին» օրենքի 81-րդ հոդվածի համաձայն՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների մարմինների միջև լիազորությունների վերաբերյալ վեճերի առաջացման դեպքում նշված մարմիններից յուրաքանչյուրը կարող է դիմել ՄԳ: Չիլիի սահմանադրության 93-րդ հոդվածի համաձայն՝ վեճերի մասով սահմանադրական տրիբունալ կարող են դիմել վեճի կողմերը կամ դատարանները:

<sup>16</sup> Սահմանադրական պատասխանատվության վերաբերյալ միջազգային փորձի վերլուծությունից բխում է, որ սահմանադրական պատասխանատվության ինստիտուտը կիրառվում է մի շարք պետություններում՝ Պորտուգալիայում (սահմ. 117-րդ հոդված), Ֆինլանդիայում (սահմ. 113-րդ հոդված), Լեհաստանում (սահմ. 199-201-րդ հոդվածներ):

<sup>17</sup> Տե՛ս, *European commission for democracy through law*, «Preliminary opinion on the draft amendments to chapters 1 to 7 and 10 of the constitution of the Republic of Armenia», Opinion no. 757/2014, CDL-PI(2015)015rev Strasbourg, 10 September 2015, point 146-147, հասանելի էր՝ [http://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-PI\(2015\)015rev-e](http://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-PI(2015)015rev-e)

Айк Кесоян

Ведущий специалист юридического управления аппарата Президента РА.  
Аспирант академии государственного управления РА

РЕЗЮМЕ

*Функциональная роль Конституционного суда в обеспечении принципа баланса и разделения власти*

В рамках исследования предметом исследования стала функциональная роль Конституционного суда РА в обеспечении принципа баланса и разделения власти. В исполненном исследовании выявлены и представлены полномочия конституционного суда, которые непосредственно связаны с обеспечением принципа сбалансирования и разделения власти. Одновременно возвратились к задачам обеспеченности Конституционного суда правовыми и политическими гарантиями для осуществления отмеченной функции.

*Ключевые слова:* принцип разделения и сбалансирования власти, спор, связанный с конституционными полномочиями, истолкование Конституции, институциональная независимость, функциональная независимость.

Hayk Kesoyan

Staff of the President of Armenia, legal department, leading specialist  
PhD student of public administration academy of the Republic of Armenia

SUMMARY

*The functional role of the Constitutional Court in the provision of the principle of power division and balance*

The functional role of the Constitutional Court of the Republic of Armenia in the provision of the principle of power division and balance is the subject of research. Competences of the Constitutional Court have been revealed and have been presented in the context of the research which are directly connected with the provision of the principle of power division and balance. The issues of provision of the Constitutional Court with legal and political guarantees for the implementation of above-mentioned function have been discussed in this research.

*Keywords:* the principle of power division and balance, dispute connected with constitutional competences, interpretation of the Constitution, institutional independence, functional independence.